Doi:10.54503/0135-0536-2022.1-206

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԻՄԵՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ նոր մոտեցում, հատկանիշներ, կիմերական մշակույթ, դամբանային համալիր, դամբանախմբեր, թաղման ծես, ցեղախմբեր, հեծյալ ռազմիկներ, զենք, ձիասարք:

Նախաբան

Կիմերները, ըստ էության, Արևելյան Եվրոպայի պատմական առաջին ժողովուրդն են[1]: Հնագիտությանը հայտնի է «կիմերական մշակույթ» եզրը: Այն սկսել են գործածել Հյուսիսմերձևեծովյան նախասկյութական մշակույթները հետազոտող Դ. Յա. Սամոկվասովը, Մ. Էբերտը, Ա. Տալգրենը՝ անցած դարասկզբին[2]: Վ. Ա. Գորոդցովը, անդրադառնալով կիմերական մշակույթի խնդրին, փորձել է առանձնացնել հիշյալ մշակույթին բնորոշ աշխատանքի գործիքների և զենքի առաջատար տիպերը[3]: Կարծիքը, որ կիմերները կոբանյան մշակույթի կրողներն են[4], հետագա հետազոտություններով չի հաստատվել: Ալեքսանդր Յեսսենը գտնում էր, որ բուն կիմերական մշակույթը դեռ պետք է փնտրել[5]: Ուսումնասիրողներն անդրադարձել են Հյուսիսային Կովկասում և Ղրիմում կիմերական մշակույթի առկայության խնդիրներին[6]: Ա. Յու. Ալեքսեևը ստիպված է խոստովանել, որ Արևելյան Եվրոպայի տափաստաններում հայտնի չէ որևէ հնագիտական մշակույթ, որը կարելի է միարժեքորեն մեկնաբանել որպես կիմերական[7]: Ասկոլդ Իվանչիկի հայտնի աշխատության մեջ նշվում է, որ կիմերական հնագիտական մշակույթն ինչպես եղել է, այդպես էլ մնացել է խնդրահարույց, սակայն այդ հիմնախնդրի լուծման ճանապարհներ կարելի է գտնել[8]: Հյուսիսմերձևեծովյան տափաստանների վաղերկաթեղարյան դարաշրջանի սկզբնական փուլն ընդունված է անվանել կիմերական կամ նախասկյութական[9]:

---

* *Ներկայացվել է 30. XI. 2021 թ., գրախոսվել է 11. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 18. I. 2022 թ.:*

[1] Городцов. 1928, 46–47; Крупнов. 1958, 176; Махортых. 2008, 375.

[2] Иванчик. 1996, 14.

[3] Городцов. 1928, 53–58.

[4] Ельницкий. 1949, 23.

[5] Иессен. 1954, 131.

[6] Крупнов. 1960, 110, 127; Щепинский. 1958, 146–147; Щепинский. 1962, 64–65.

[7] Алексеев. 1992, 77.

[8] Иванчик. 1996, 14–15.

[9] Мелюкова, Мошкова. 1989, 7.

Կիմերական հիմնախնդրի արդի վիճակը

Ա. Յեսսենը, 1950-ականների սկզբին անդրադառնալով կիմերական և սկյութական մշակույթների հարաբերակցությանը, եկավ այն եզրակացության, որ սկյութական ցեղերն ու կիմերները մ. թ. ա. VIII–VII դարերում ունեին արտակարգ մոտ մշակույթներ և որպես այդ վաղ շրջանի մշակութային համալիրների ստեղծողներ՝ կարելի է ընդունել ինչպես սկյութների նախնիներին, այնպես էլ կիմերներին[10]*: Որոշ ժամանակ անց հնագիտական ուսումնասիրություններում սկսեց հանդիպել նաև «կիմերա-սկյութական մշակույթ» եզրը*[11]*, թեև մեկ միասնական «կիմերա-սկյութական մշակույթի» գոյությունը մինչ այժմ ապացուցված չէ: Ի. Ն. Մեդվեդսկայան վաղսկյութական մշակույթի ժամանակագրության վերաբերյալ գիտական բանավեճի շրջանակներում 1992 թ. հավաստել է, որ «քոչվորների մշակույթը միասնական էր»՝ հիմք ընդունելով Իրանում ու Թուրքիայում հայտնաբերված հնագիտական համապատասխան նյութերի տիպաբանական նմանությունը: Կիմերների և սկյութների հնագիտական մշակույթների միասնականության մասին խոսք է գնում նաև նույն հեղինակի մեկ այլ հոդվածում*[12]*: Սակայն այն հանգամանքը, որ երկու ցեղախմբերի գենքն ու ձիասարքը միասնական են*[13]*, դեռևս բավարար չէ ապացուցելու համար՝ կիմերները և սկյութները միևնույն հնագիտական մշակույթի կրողներն են: Այլ խոսքով, քիչ հավանական է, որ մ. թ. ա. VIII դարի վերջ – VII դարում պատմական Գամիրքի և Շակաշենի մշակույթները նույնական են եղել*[14]*: Ստեղծված փակուղային իրավիճակից ելք գտնելու նպատակով՝ մեր կողմից նախկինում գիտական շրջանառության մեջ է դրվել «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը՝ տարբեր մշակույթների վերաբերյալ միահյուսված հասկացությունները հետագայում տարանջատելու համար*[15]*:*

Վերջին տարիներին արտերկրում հրատարակված աշխատանքներից կարելի է առանձնացնել Ա. Իվանչիկի մենագրությունը, որտեղ կիմերներին առնչվող հարցերը քննարկվում են արևելաեվրոպական տափաստանների և Կովկասի հնագիտության ընդհանուր համատեքստում: Պարզելու համար, թե ինչ հնագիտական իրողություններ են թաքնված կիմերների վերաբերյալ գրավոր աղբյուրների հաղորդումների ետևում, հեղինակի կարծիքով,

---

[10] Иессен. 1953, 110; Иессен. 1954, 130.

[11] Воронов. 1980, 200; Медведская. 1992, 105.

[12] Медведская. 1994, 124–125, 129.

[13] *Նույնիսկ այս դրույթն ապացուցված չէ: Օրինակ՝ կիմերական սուրը՝ հետզհետե լայնացող և ծայրի մոտ կտրուկ նեղացող շեղբով, չի հանդիպում սկյութական համալիրներում: Կարելի է նշել նաև «թռչնագլուխ բլթակով» երկմետաղ մարտական կացինների առկայությունը կիմերական համալիրներում ու դրանց բացակայությունը գենքի սկյութական հավաքածուներում: Լատինական D տառի ձևն ունեցող վերջավորություններով կիմերական լկամները բնորոշ չեն սկյութական ձիասարքին: Տիպաբանական ապագա հետազոտությունները կօգնեն վեր հանել այլ տարբերություններ ևս:*

[14] *Գամիրքը Հյուսիսային Կովկասում տեղադրելու վարկածը (տե՛ս* Махортых. 2008, 358*), մեր կարծիքով, քննադատության չի դիմանում:*

[15] *Թումանյան. 2018, 216:*

կարիք է առաջանում անդրադառնալ ոչ միայն և ոչ այնքան բուն կիմերական տափաստանային տարածքների նյութերին, այլ՝ նախ և առաջ՝ Առաջավոր Ասիայի տարածաշրջաններում հայտնաբերված համապատասխան համալիրներին: Թեև կիմերների ասպատակություններին ենթարկված հիշյալ տարածաշրջանները նրանց մշակույթի համար «լուսանցքային» են համարվում, այնուամենայնիվ, գրավոր ու հնագիտական աղբյուրների տվյալների համաձայնեցման խնդրում գերակայությունը հենց դրանց է պատկանում: Ա. Իվանչիկն առաջ է քաշում այն վարկածը, որ կիմերական հնագիտական մշակույթի առանձնահատկություններից են ստորգետնյա քարարկղներում կատարված թաղումները և դրանցում երկմետաղ կոցավոր կացինների առկայությունը, որոնց շեղբի տակ «թռչնագլուխ բլթակ» կա[16]: Այսպիսով, Իմիրլերի (Ամասիայի մարզ) և Նորշունթեփեի (Ծոփք) քոչվորական դամբարանները համարվել են կիմերական[17]:

Ուշադրության է արժանի, անշուշտ, Ս. Վ. Մախորտիխի դոկտորական ատենախոսությունը[18]: Այս աշխատության մեջ մանրամասն անդրադարձ է արվում հիմնախնդրի նախապատմությանը: Ատենախոսության հեղինակը համակարծիք է այն ուսումնասիրողներին, որոնք համարում են՝ կիմերների թրակական պատկանելությունը հնագիտական տվյալներով չի հաստատվում: Նույն կերպ ժխտվում են վարկածները, որոնց համաձայն՝ կիմերները կոբանյան կամ մեոտական մշակույթների կրողներն են: Մերձսևածովյան տարածաշրջանում առանձնացվում են վաղքոչվորական ցեղախմբերի վեց ենթախմբեր՝ ըստ հնագիտական համալիրների նկարագրի: Միաժամանակ ընդգծվում է դրանց մշակութային անհամասեռությունը: Եզրակացություն է արվում, որ կիմերներն իրականում գոյություն են ունեցել:

Կիմերական հիմնախնդրի պարզաբանման գործում լուրջ ներդրում է Վ. Ս. Օլխովսկու մենագրությունը, որը նվիրված է վաղ երկաթի դարաշրջանում եվրասիական տափաստանների արևմտյան հատվածի ընակչության կոթողային քանդակագործությանը[19]: Այս աշխատությունը՝ քննարկվող հարցերի ընդգրկման ամբողջականության, կատարման ու ներկայացման որակի առումով, իր բնագավառում առայժմ ամենածանրակշիռ և հիմնարար հետազոտությունն է: Այստեղ պատկերաքանդակները հիմնավորված դիտարկվում են որպես հնագիտական սկզբնաղբյուր: Ուսումնասիրության

---

[16] Ivantchik. 2001, 12, 49, 55–56. *Հատկանշական է՝ հիշյալ հեղինակն իր այս մենագրության հրատարակությունից ընդամենը տասներեք տարի առաջ այն կարծիքն է հայտնել, որ «մենք շատ քիչ գիտենք» մ. թ. ա. VIII–VII դարերում քոչվոր կիմերների և սկյութների Առաջավոր Ասիա ներխուժումների մասին, թեև դրանք լրջորեն ազդել են քննարկվող տարածաշրջանի «ճակատագրի» վրա (տե՛ս* Иванчик. 1988, 38*):*

[17] Ivantchik. 2001, 279. *Այս աշխատությունը ենթարկվել է չափազանց սուր քննադատության և համարվել «հնագիտական տվյալների պարզունակ գործածում պատմաբանի կողմից», քանի որ այստեղ բացակայում է հեղինակի կողմից օգտագործվող հնագիտական աղբյուրի «տարրական քննադատությունը» (տե՛ս* Скаков, Эрлих. 2005, 201–203; Скаков. 2005, 16–17*):*

[18] Махортых. 2008.

[19] Ольховский. 2005.

ամենածավալուն հատվածը՝ երրորդ գլուխը, նվիրված է «կիմերական» պատկերաքանդակներին: Դրանով լուրջ հիմքեր են ստեղծվում կիմերական հուշակոթողները սկյութական մարդակերպ մահարձաններից տարբերելու և առանձնացնելու համար:

Ուսումնասիրության հեռանկարները

Կիմերական և սկյութական մշակութային համալիրների տարանջատումն ու սահմանազատումը կարևոր խնդիր է, որը մինչ այժմ արմատապես չի լուծվել, մասնավորապես՝ առաջավորասիական տարածաշրջանում: Կիմերների ու սկյութների հնագիտական մշակույթների մերձավորությունը նշել են բազմաթիվ հետազոտողներ[20], դրանց թվում՝ տողերիս հեղինակը: Հետևություն ենք արել, որ քոչվորների հիշյալ ցեղախմբերը պատկանում են միևնույն տնտեսական-մշակութային տիպին, մեր պատկերացմամբ՝ մեկ մշակութային ընդհանրությանը[21]: Դամբանային համալիրների վերաբերյալ խոսելիս՝ չենք բացառել, որ թաղման ծեսի բաղադրամասերի մանրակրկիտ վերլուծության արդյունքում հնարավոր կդառնա կիմերական ու սկյութական դամբանային համալիրները քննարկել առանձին՝ որպես տարբեր մշակույթների բաղկացուցիչներ[22]:

Հայկական լեռնաշխարհի դամբանային համալիրներում կիմերական և սկյութական թաղման ծեսերի դրսևորումները նախկինում քննարկման առարկա են դարձել[23]: Եթե կիմերները, իրոք, դուրս են մղվել իրենց բնակության տարածքներից, ապա, հավանաբար, նրանք ճանապարհ պիտի ընկնեին ընտանիքների հետ[24]: Այսինքն, հեծյալ ռազմիկների շարասյունների հետ պետք է լիներին սայլեր, որոնցով հարմար կլիներ տեղափոխել կանանց, երեխաներին և ապրելու համար անհրաժեշտ գույքը: Իսկ կիմերներին «հետապնդող» սկյութների զորագնդերում, ըստ երևույթին, կանայք ու երեխաներ չկային[25]: Սկյութների արշավանքը սկզբնական փուլում, ավելի շուտ ռազմական ձեռնարկում էր[26]: Զենք հետևում այն ուսումնասիրողներին, ովքեր գերադասում են «կիմերա-սկյութական մշակույթը» քննարկել որպես մեկ ամբողջություն[27]: Նրանցից, օրինակ, Ա. Իվանչիկը համարժեք է համարում «վաղսկյութական» ու կիմերական հուշարձաններ արտահայտությունները: Ինչ վերաբերում է հյուսիսմերձսևծովյան տարածաշրջանում կիմերական հիմնախնդրի շուրջ քննարկումներին, ապա ենթադրյալ կիմերական մշակույթին որոշակի հնագիտական հուշարձաններ վերա-

[20] Алексеев. 1992, 40, 91; Алексеев. 2003, 99; Ivantchik. 2001, 172–176.

[21] Tumanyan. 2010, 189–191; Tumanyan. 2016, 27–31.

[22] *Թումանյան. 2018, 216:*

[23] Tumanyan. 2017, 196–201.

[24] Phillips. 1972, 136.

[25] Ильинская. 1983, 55; Мелюкова. 1989, 113.

[26] Черненко, Махортых. 1986, 227, 229; Иванчик. 1988, 38–48.

[27] Воронов. 1980, 200; Медведская. 1992, 105; Дьяконов. 1994, 112; Алексеев. 1992, 40; Алексеев. 2003, 98; Ivantchik. 2001, 174.

գրելու փորձերից[28] և ձիասանձի մետաղական պարագաների հիման վրա մ. թ. ա. VIII–VII դարերի տափաստանային հուշարձանների դասակարգումից հետո[29], թաղման ծիսակարգում նկատվել[30] և ընդհանրացվել են[31] որոշ օրինաչափություններ: Օրինակ՝ դեպի արևելք ու հյուսիս-արևելք ուղղված կմախքները սովորաբար կծկված են և ուղեկցվում են գույքի չեռնոզորովյան տիպի համալիրներով, իսկ դեպի արևմուտք ուղղված ու մեծ մասամբ ձգված դիրքով կմախքների հետ հայտնաբերվում են նովոչերկասկյան տիպի արտեֆակտեր: Հիշյալ օրինաչափությունների հիման վրա փորձ է արվել դասակարգել մ. թ. ա. VIII–VII դարերի դամբարանները[32]: Հարկ է հավելել նաև, որ ժամանակագրական գծային սխեման ոչ բոլոր ուսումնասիրողների կողմից է ընդունվում: Չի բացառվում չեռնոզորովյան և նովոչերկասկյան խմբերի հուշարձանների մասնակի համագոյակցությունը[33]: Համարվում է, որ կիմերական մշակույթը կազմավորվել է Դնեպրի և Նախակովկասի միջև ընկած տափաստաններում, Հյուսիսային Կովկասի նստակյաց ցեղերի հետ սերտ շփումների պայմաններում[34]:

Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի առկայության խնդրի ուսումնասիրության ընագավառում անհրաժեշտ է նոր մոտեցում ցուցաբերել: Դա հատկապես կարևոր է վերացնելու համար այն հակասությունը, որ կա հնագույն գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների և գիտական հետազոտությունների արդյունքների միջև: Գտնում ենք, որ հնագիտական իրողությունները հնարավորինս պիտի համաձայնեցվեն և համաժամանակացվեն պատմական իրադարձությունների հետևանքով ձևավորված մշակութային իրավիճակին: Մյուս կողմից՝ առանձնապես արդիական է այն միտքը, որ կիմերական մշակույթի ծագման և կիմերների վաղ ժամանակաշրջանի պատմության լուսաբանման խնդիրը հնարավոր չէ լուծել միայն հյուսիսսևծովյան կամ հյուսիսկովկասյան տարածաշրջանների տվյալների հիման վրա:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում առկա կիմերական մշակույթի ուսումնասիրության հարցը խիստ կարևոր է և արդիական: Այն անտեսելը հանգեցնում է գիտական լուրջ սխալների՝ Հայքի կիմերական մշակութային համալիրները, ակամա, վերագրվում են էթիունյան կամ ուրարտական մշակույթներին: Մյուս կողմից, հարկ է խուսափել հակառակ ծայրահեղությունից: Չի կարելի բոլոր ոչ ուրարտական հնագիտական համալիրները համարել կիմերական կամ սկյութական: Այսինքն, ոչ միայն պետք է հաշվի առնել համաժամանակյա էթիունյան ընիկ մշակույթի գոյությունը հավաստող բազմաթիվ փաստերը, այլև հարկ է գիտակցել մ. թ. ա. VII–VI դարերի տեղական մշակույթի հետագա լուրջ ուսումնասիրության անհրաժեշտությու-

---

[28] Городцов. 1928, 53–59.
[29] Иессен. 1953.
[30] Смирнов. 1966, 41–42; Лесков. 1971, 87–91.
[31] Тереножкин. 1976, 36–60; Махортых. 2008, 31–32, 105.
[32] Шарафутдинова, Дубовская. 1982, 129–132.
[33] Ivantchik. 2001, 120.
[34] Махортых. 2008, 301–303.

նը: Առաջին հայացքից էլ երևում է, որ Հայաստանի հիշյալ ժամանակաշրջանի մի շարք հուշարձաններում (Օշականի № 61 ու № 87, Դարանջի, Գյոզլուի[35], Զոլաքարի[36] դամբարաններ և այլն) շարունակվում է էթիունյան մշակութային ավանդությունը: Մասնավորապես՝ Գյոզլուի դամբարանը համարվում է ուշուրարտական և հին հայկական մշակույթները կապող օղակ: Ինչպես տեսնում ենք, քննարկվող թեման արդիական է ոչ միայն կիմերագիտության, այլև՝ հնագիտության և հայագիտության համար ընդհանրապես:

Այս դժվարին խնդիրը պարզաբանելիս հարկ է ցուցաբերել համակողմանի մոտեցում: Ստացված բուն հնագիտական արդյունքները պետք է զուգակցել գրավոր վկայությունների, պատմալեզվաբանական, մասնավորապես՝ տեղանվանաբանական տվյալների, բանագիտական և ազգագրական տեղեկությունների հետ: Ինչպես ամեն մի հնագիտական ուսումնասիրություն, որը նման հնարավորություն է ընձեռում, այս ուսումնասիրությունը ևս ճիշտ կլինի սկսել գրավոր աղբյուրների քննությունից: Քանի որ կիմերները գիր և դրամ չեն ունեցել, ուստի մեր ձեռքի տակ են թեմային առնչվող ընդամենը երկու տեսակի գրավոր սկզբնաղբյուրներ՝ սեպագիր արձանագրություններ և պատմիչների հաղորդումներ: Անհրաժեշտ է օգտվել այս բոլոր սկզբնաղբյուրներից՝ ասուրաբաբելական սեպագիր արձանագրություններից, Աստվածաշնչի և պատմիչների հաղորդումներից, որոնք գնահատելի ու կարևոր տեղեկություններ են հաղորդում քննարկվող հարցի առնչությամբ:

Խնդրի պարզաբանմանը նպատակաուղղված նոր մեթոդի էությունն այն է, որ Հայկական լեռնաշխարհի կիմերական հնագիտական համալիրներն առանձնացնելու համար ներմուծվելու են դրանք բնութագրող որոշակի հատկանիշներ, որոնց կիրառման շնորհիվ կմեծանա ուսումնասիրությամբ ստացվելիք արդյունքների պատմական իրականությանը մոտ լինելու հավանականությունը: Թեմային առնչվող բազմաքանակ տվյալներն ամփոփելիս գործ ենք ունենալու հնագիտական երեք տիպի տեղեկությունների հետ: Դրանց հիմնական մասը վերաբերում է առանձին դամբանային համալիրներին, սակայն կա նաև հաղորդումների մի ստվար հատված, որտեղ խոսք է գնում դամբանախմբի կամ դամբանադաշտի մասին ընդհանրապես: Այդ տիպի տեղեկատվությունը հնարավոր չէ վերագրել որոշակի դամբարանի, առավել ևս, երբ հաճախ անհայտ է մնում, թե տվյալ մշակույթին պատկանող թաղման քանի՞ համալիր կա այդ դամբանադաշտում: Սակայն չօգտագործել այս երկրորդ տիպի աղբյուրը, նշանակում է նաև հատկանիշների մակարդակում զրկվել բազմաթիվ կարևոր փաստերից: Միևնույն ժամանակ, նույն աղյուսակում ընդգրկել մեկական տողով ներկայացվող վիճակագրական տվյալներ՝ ընդամենը դամբանային մեկ համալիրի ու ամբողջ դամբանախմբի վերաբերյալ, ճիշտ չի լինի, քանի որ դրանք համարժեք հասկացություններ չեն և դրանց «կշիռը» հատկանիշների ընդգրկման թե՛ որակական, թե՛ քանակական հարաբերակցության առումով, տարբեր է: Հատկանիշների ընդգրկման որակական առումով դամբանախմբերը, անշուշտ, գիջում են դամբարաններին, քանի որ վերջիններիս վերաբերյալ տեղեկատ-

[35] Есаян. 1965, 233.

[36] Hakobyan. 2002, 466.

վությունն ավելի մանրամասն ու հանգամանալից է[37]: Իսկ քանակական առումով ավելին են դամբանախմբերի հատկանիշները, քանի որ գործ ունենք բազմաթիվ դամբարանների համախումբ տվյալների հետ: Ոստի ձեռք բերված տվյալները ներկայացվելու են երկու տիպի վիճակագրական աղյուսակներում: Մեկում տեղ են գտնելու առանձին դամբանային համալիրներին առնչվող և հաշվառման ենթակա տեղեկությունները, իսկ մյուսում ընդգրկվելու են դամբանախմբերին կամ քննարկած դամբարաններից բացի՝ նույն դամբանախմբի այլ դամբանային համալիրներին առնչվող տվյալները: Բնակատեղիներին վերաբերող երրորդ տիպի տեղեկությունները և՝ ըստ առանձին հատկանիշների, ամփոփվելու են վիճակագրական աղյուսակում:

Հետազոտության աշխարհագրական սահմանները, ընդգրկելով Հայկական լեռնաշխարհն ու հարակից տարածաշրջանները, հասնում են մինչև Հյուսիսային Կովկաս ու Սև ծովի ավազան: Առանց մերձսևծովյան և հյուսիսկովկասյան տարածաշրջանների կիմերական հնագիտական համալիրների մանրամասն ուսումնասիրության անհնար կլիներ Հայկական լեռնաշխարհի համապատասխան համալիրների հետ տիպաբանական զուգահեռների անցկացումը և ընդհանրությունների պարզաբանումը: Հետաքրքիր է, որ սկյութական հնագիտության հետ կապված բազմաթիվ հարցերի լուծումը ևս թերի կլիներ առանց կիմերական մշակույթի հետազոտության, քանի որ երկրորդն առաջինի ձևավորման սկզբնաղբյուրներից է[38]:

Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ամփոփվելու են մ. թ. ա. VIII դարի վերջ – VI դարի երրորդ քառորդ միջակայքում: Կարելի է հավաստի համարել, որ կիմերների ներխուժումներն Առաջավոր Ասիա կայացել են մ. թ. ա. 714 թ. ոչ ուշ, երբ նրանք արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին[39]:

Այսօր ավելի է կարևորվում գիտական նոր մոտեցման նշանակությունը կիմերական խնդրի լուծման ճանապարհին: Գնահատելով հատկապես սեպագիր աղբյուրների և անտիկ շրջանի պատմիչների հաղորդումների դերն այս հարցում՝ հարկ է ընդգծել հնագիտության առաջնային տեղն ապագա հետազոտությունների շարքում: Հնագիտական ամեն մի նոր հուշարձանի հայտնաբերումը կարող է ճշգրտումներ մտցնել քննարկվող խնդրի պարզաբանման գործում: Հաշվի առնելով այսօրվա ձեռքբերումները հին մշակույթների ուսումնասիրության ոլորտում՝ կարելի է հավաստել, որ առանձին իրերի ընտրության սկզբունքը կարող է նպաստել միայն տարբեր առնչությունների պարզաբանմանը, իսկ յուրաքանչյուր մշակույթի գիտական քննությունը հարկ է սկսել մշակութակազմիչ համալիրները լիարժեք ներդրավելուց և հետազոտելուց:

Հայկական բարձրավանդակը հինարևելյան քաղաքակրթության հիմնական օջախներից էր: Այստեղ վաղուց տարածված էին քաղաքային մշա-

---

[37] *Դամբարանը նկարագրելիս հետազոտողները սովորաբար անդրադառնում են դրա կառուցվածքին, թաղման ծիսակարգին, կատարված զոհաբերություններին, ուղեկցող գույքի տեսականուն և, երբեմն, առանձին իրերին:*

[38] Махортых. 2008, 6.

[39] Sulimirski. 1954, 283; Иванчик. 1990, 8, 16; Алексеев. 1992, 28; Ivantchik. 2001, 14.

կույթը, կոթողային ճարտարապետությունը, գիրը: Իսկ եվրասիական քոչվորների հասարակությունը մ. թ. ա VIII–VII դարերում իրենից ներկայացնում էր տնտեսական-մշակութային այլ տիպ: Բնականաբար, Հայկական լեռնաշխարհ ներթափանցման առաջին փուլերում ավելորդ է խոսել ոչ միայն կիմերների «քաղաքների», այլև քիչ թե շատ ամրացված բնակավայրերի մասին (բացառություն կարող էին կազմել հընթացս նվաճված բերդ–շենները): Այդ պատճառով՝ կիմերական մշակույթի գիտական հետազոտության պարագայում՝ շերտագրական դիտողությունների սակավության պայմաններում, լայնորեն կիրառվելու է համեմատական-տիպաբանական մեթոդը: Հարկ է ընդգծել, որ մերձևեւծովյան տարածաշրջանների կիմերական մշակույթը և Այսրկովկասում հիշյալ մշակույթի դրսևորումները լրիվ նույնական չեն կարող լինել: Դրա հիմնական պատճառն այն է, որ շարժուն և ռազմատենչ ցեղախմբերը պիտի օգտագործեին Հայկական լեռնաշխարհում առկա մշակութային հզոր ավանդույթները, միջավայրի հազարամյա ստեղծագործ ոգու հարուստ հնարավորությունները: Քոչվորների արագ շարժվելու հմտությունը թույլ էր տալիս նրանց պատմական կարճ ժամանակամիջոցում սփռվել ընդարձակ, այդ թվում՝ թշնամական տարածքներում: Ըստ այդմ՝ կիմերական հուշարձաններին աղերսվող հարցերը քննարկվելու են Առաջավոր Ասիայի հնագիտության պատմամշակութային ու ժամանակագրական հիմնախնդիրների շրջանակներում:

Կան նախադրյալներ, որպեսզի Հայկական լեռնաշխարհի հուշարձանների համակարգում առանձնացվեն կիմերական հատկանիշներով մի շարք դամբանային և բնակելի համալիրներ: Գիտական քննության ընթացքում հաշվի են առնվելու դամբանային համալիրի կառուցվածքային տարրերի, հուղարկավորման ծիսակարգի և զոհաբերությունների վերաբերյալ տվյալները: Դամբանային համալիրի նույնացման գործում առաջնային են համարվելու դամբանախցի պատ(եր)ի կոր լինելը, որոշակի տիպի (ոչ մարդակերպ) մահարձանի կամ հուշակոթողի առկայությունը դամբանաթմբի վրա կամ դամբանախցում, բազմամարդ այնպիսի թաղումները, որոնցում կմախքներից մեկը կամ մի քանիսն առանձնանում են մյուսներից իրենց դիրքով, հանգչելատեղով կամ այլ հատկանիշներով, ինչպես նաև՝ եղբայրական թաղումները: Քննարկվող դամբանախմբերում և առանձին դամբարաններում, հաճախ, հեծյալ ռազմիկներ են ամփոփվել: Ուստի, կիմերական թաղումների համար հարկ է առանձնացնել ևս երկու կարևոր բնութագրիչ՝ ձիու և ձիասարքի տեղադրումը դամբանասրահում: Բացի այդ, որքան հնարավոր է, ամբողջության մեջ է դիտարկվելու կիմերական հեծյալ ռազմիկներին հատուկ իրերի հավաքածոն (զենք, ձիասարք, աշխատանքի գործիքներ և այլն): Այլ տարածաշրջանների կիմերական դամբաններում բրոնզե բազմաթիվ զենքերի առկայությունը ծանրակշիռ փաստարկ է հօգուտ այն տեսակետի, որ զարգացած երկաթի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհ ներթափանցած ցեղախմբերը գտնվում էին մետաղամշակության ավելի ցածր մակարդակի վրա, քան տեղաբնիկները:

Նորահայտ փաստերի և հին տվյալների վերլուծությունները մեզ հիմք են տալիս եզրակացնել, որ Հայաստանի կիմերական տիպի հնագիտական համալիրներում պետք է օրինաչափ համարել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց աշխատանքի գործիքների առկայությունը՝ կամեր, սրոցաքարեր,

բզեր, տնտեսական դանակներ, տաշուրագներ, սանդեր, աղորիքներ, ձձում-ներ, իլիկներ: Հիշենք, որ մ. թ. ա. VIII–VII դարերի ուրարտական հուշարձան-ների պեղումներով հայտնաբերված զենքերը պատրաստված են բացառա-պես երկաթից[40]*: Մերժելի է ներմուծված առարկաների հիման վրա հնագի-տական համալիրների թվագրման սկզբունքը, քանի որ այդ իրերը կարող են որևէ համալիրի կազմում հայտնվել իրենց արտադրությունից երկար ժամա-նակ անց*[41]*: Այսպիսով, քննարկվող խնդրի արմատական լուծման համար հարկ է ցուցաբերել հայեցակարգային այլ մոտեցում:*

Առանձնացնելով կիմերական տիպի թաղումներում դիտվող հատկանիշ-ները՝ ամենևին չենք բացառելու, որ դրանք կարող են սովորական լինել նաև ուրարտական, էթիոնյան կամ համաժամանակյա այլ մշակութային փակ համալիրների համար: Դրանցում կարող են հանդիպել նաև ասուրական, իրանական, փռյուգական, արևմտափոքրասիական մշակույթներին պատկա-նող առարկաներ: Մեր ընտրանքի մեջ են մտնելու տղամարդկանց այն դամ-բարանները, որոնցում համատեղ առկա են կիմերական թաղումներում հանդիպող առնվազն չորս հատկանիշներ: Կին կամ երեխա ննջեցյալների դեպքում կարելի է բավարար համարել բնորոշիչ հատկանիշի առկայությու-նը (օրինակ՝ կատակոմբում կատարված թաղումը) և համապատասխան թվա-գրությունը (մ. թ. ա. VIII դարի վերջ – VII / VI դար): Հավելելով համատեղ հանդիպող հատկանիշների քանակը՝ կարելի է առավել վստահելի և ճշգրիտ արդյունքներ ակնկալել, սակայն, օպտիմալ համարվելու համար բավարար է տղամարդկանց թաղումներում փոխադարձ հանդիպող չորս հատկանիշը, որոնցից առնվազն մեկը՝ բնորոշիչ: Թեև վիճակագրական վերլուծություն-ները պարզ ներկայացնելու նպատակով ամեն մի հատկանիշի տրվելու է միավոր արժեք, հասկանալի է, որ դրանք իրականում չեն կարող հավասար-արժեք լինել: Նույնիսկ բուն կիմերական հատկանիշները, ինչպիսիք են թաղ-ման կատակոմբային կառույցները, կիմերական ոչ մարդակերպ մահար-ձանները, ասպանդակաձև, ութաձև կամ D-աձև ծայրերով լկամները, կիմե-րական սրերը, խողովակակոթառ կիմերական («սկյութական արխաիկ տի-պի») նետասլաքները, տվյալ փակ համալիրի մշակութային պատկանե-լության բնորոշման հարցում հավասար «կշիռներ» չեն կարող ունենալ: Օրինակ՝ կատակոմբի կամ որոշակի տիպի քարե հուշակոթողի առկայությունը խոսուն վկայություն է մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ առանձին «կիմերական» տիպի նետասլաքի հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք կիմերական թաղման հետ:

---

[40] Куфтин. 1941, 53; Мартиросян. 1956, 83. *Բ. Ա. Կուֆտինը Հայ-կական լեռնաշխարհում երկաթի լայն տարածման դարաշրջանը համաժամանա-կացրել է կոբանյան բրոնզի ծաղկման փուլի հետ: Իր մեկ այլ աշխատությունում նա նկատել է, որ բրոնզի փայլուն ծաղկմամբ բնորոշվող կոլխիդյան մշակույթի ավարտը համապատասխանում է Վանի թագավորության ժամանակաշրջանին և հինարևելյան պետություններում երկաթե զինատեսակների կողմից բրոնզե զեն-քերը դուրս մղելուն (տե՛ս* Куфтин. 1944, 68*): Սրանով ժխտվել է այն կար-ծիքը, իբր, կիմերների զենքը և գործիքները որակապես չէին տարբերվում Առաջավոր Ասիայի ամենակուլտուրական ժողովուրդների զենքից և աշ-խատանքի գործիքներից* (Городцов. 1928, 50*):*

[41] Рабинович. 1936, 79–80.

Եզրակացություն

Քննարկվող հիմնախնդիրը մինչ այժմ գրեթե չի լուսաբանվել գիտական հետազոտություններում, ուստի կարիք կա ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել արծարծվող հարցերին՝ ընդգծելով նոր մոտեցումների կարևորությունը: Եկել է ժամանակը «կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունից» կիմերական մշակույթի տարանջատման, սահմանազատման և առանձին ուսումնասիրության փորձ կատարելու: Համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք կասկածի տակ չեն առնում կիմերների ռեալ գոյությունը: Կարծում ենք, որ Հայկական լեռնաշխարհում կիմերական մշակույթի տեղն ու դերը պարզաբանելը հնարավորություն կտա հնագիտական իրողությունները համաձայնեցնել և համաժամանակացնել պատմական իրադարձությունների արդյունքում ձևավորված մշակութային իրավիճակին:

Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեղարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ: Հեղինակ է 5 գրքի և 66 հոդվածի:
gstumanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թումանյան Գ. 2018, «Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը. – Արագածի թիկունքում: Հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տ. Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 214–217:

Алексеев А. Ю. 1992, Скифская хроника (Скифы в VII–IV вв. до н. э.: историко-археологический очерк). СПб., «Петербургкомстат», 206 с.

Алексеев А. Ю. 2003, Хронография Европейской Скифии VII–IV вв. до н. э. СПб., Изд. Государственного Эрмитажа, 416 с.

Воронов Ю. Н. 1980, О хронологических связях киммерийско-скифской и колхидской культур. – Скифия и Кавказ. Сборник научных трудов. Ред. А. И. Тереножкин. Киев, «Наукова думка», с. 200–218.

Городцов В. А. 1928, К вопросу о киммерийской культуре. – Труды секции археологии Института археологии и искусствознания, II. М., с. 46–60.

Дьяконов И. М. 1994, Киммерийцы и скифы на Древнем Востоке. – «Российская археология» (М.), № 1, с. 108– 116.

Ельницкий Л. А. 1949, Киммерийцы и киммерийская культура. – «Вестник древней истории» (М.), № 3, с. 14–26.

Есаян С. А. 1965, Погребения VI–V вв. до н. э. в горах Шамшадина (Армения). – «Советская археология» (М.), № 3, с. 229–233.

Иванчик А. И. 1988, Воины-псы. Мужские союзы и скифские вторжения в Переднюю Азию. – «Советская этнография» (М.), № 5, с. 38–48.

Иванчик А. И. 1990, Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II. – «Вестник древней истории» (М.), № 3, с. 3–19.

Иванчик А. И. 1996, Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII–VII вв. до н. э. М., «Наука», 324 с.

Иессен А. А. 1953, К вопросу о памятниках VIII–VII вв. до н. э. на юге европейской части СССР (Новочеркасский клад 1939).– «Советская археология» (М.), XVIII, с. 49–110.

Иессен А. А. 1954, Некоторые памятники VIII–VII вв. до н. э. на Северном Кавказе.– Вопросы скифо-сарматской археологии (по материалам конференции ИИМК АН СССР 1952 г.). Ред. Д. Б. Шелов. М., Изд. АН СССР, с. 131.

Ильинская В. А. 1983, Скифы и Кавказ (тезисы доклада). – Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23. Ред. Б. Б. Пиотровский. Л., «Искусство», с. 55–56.

Крупнов Е. И. 1958, Киммерийцы на Северном Кавказе (по археологическим данным). – Материалы и исследования по археологии СССР, № 68. Ред. Б. Б. Пиотровский. М.–Л., Изд. АН СССР, с. 176–195.

Крупнов Е. И. 1960, Древняя культура Северного Кавказа. М., Изд. АН СССР, 520 с.

Куфтин Б. А. 1941, Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, Изд. АН ГрССР, 491 с.

Куфтин Б. А. 1944, Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский энеолит. – «Вестник Государственного музея Грузии» (Тбилиси), т. XIII-B, с. 1–171.

Лесков А. М. 1971, Предскифский период в степях Северного Причерноморья. – Проблемы скифской археологии. Ред. П. Д. Либеров, В. И. Гуляев. М., «Наука», с. 75–91.

Махортых С. В. 2008, Культура и история киммерийцев Северного Причерноморья. Диссертация на соискание ученой степени доктора исторических наук. Киев, 583 с.

Мартиросян А. А. 1956, Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX–VIII вв. до н. э.).– «Известия общественных наук» АН АрмССР, № 9, с. 61–84.

Медведская И. Н. 1992, Периодизация скифской архаики и Древний Восток. – «Российская археология» (М.), № 3, с. 86–107.

Медведская И. Н. 1994, Заключение по дискуссии. – «Российская археология» (М.), № 1, с. 123–133.

Мелюкова А. И. 1989, Хозяйство, быт, торговля.– Археология СССР. Степи европейской части СССР в скифо-сарматское время. Ред. А. И. Мелюкова. М., «Наука», с. 113–120.

Мелюкова А. И., Мошкова М. Г. 1989, Введение. – Археология СССР. Степи европейской части СССР в скифо-сарматское время. Ред. А. И. Мелюкова. М., «Наука», с. 5–8.

Ольховский В. С. 2005, Монументальная скульптура населения западной части евразийских степей эпохи раннего железа. М., «Наука», 299 с.

Рабинович Б. 1936, О датировке некоторых скифских курганов Среднего Приднепровья. – «Советская археология» (М.), № 1, с. 79–100.

Скаков А. Ю. 2005, К изучению хронологии колхидской культуры. – «Российская археология» (М.), № 3, с. 16–24.

Скаков А. Ю., Эрлих В. Р. 2005, О хронологии «киммерийских» и раннескифских древностей. – Древности Евразии: от ранней бронзы до раннего средновековья. Памяти В. С. Ольховского. Сборник статей. Ред. В. И. Гуляев. М., Изд. ИА РАН, с. 201–227.

Смирнов А. П. 1966, Скифы. М., «Наука», 200 с.

Тереножкин А. И. 1976, Киммерийцы. Киев, «Наукова думка», 223 с.

Черненко Е. В., Махортых С. В. 1986, Рецензия на кн.: «С. А. Есаян, М. Н. Погребова. Скифские памятники Закавказья. М., 1985». – ИФЖ, № 4, с. 225–229.

Шарафутдинова Э. С., Дубовская О. Р. 1982, Киммерийская проблема и две группы погребений предскифского времени в Северном Причерноморье.– Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Ред. Б. Н. Аракелян, В. М. Массон, Э. В. Ханзадян. Ереван, Изд. АН АрмССР, с. 129–132.

Щепинский А. А. 1958, Новая антропоморфная стела эпохи бронзы в Крыму. – «Советская археология» (М.), № 2, с. 143–148.

Щепинский А. А. 1962, Погребение начала железного века у Симферополя. – «Краткие сообщения Института археологии АН УССР» (Киев), вып. 12, с. 57–65.

Hakobyan H. 2002, The Late Iron Age Grave of Sarnaghbyur, R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani (eds.). – The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin. Documenta Asiana vol. VII. Roma, CNR-Studi Sulle Civiltà dell'Egeo e del Vicino Oriente, pp. 465–466.

Ivantchik A. I. 2001, Kimmerier und Skythen. M., Paleograph-Press, 324 S.

Phillips E. D. 1972, The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology, World Archaeology. London, vol. 4, № 2, pp. 129–138.

Sulimirski T. 1954, Scythian Antiquities in Western Asia, Artibus Asiae. Ascona, vol. 17, № 3/4, pp. 282–318.

Tumanyan G. 2010, The Cimmerian-Scythian Sepulchres of the Armenian Highland. – "Aramazd: AJNES" (Yerevan), vol. V, iss. 2, pp. 188–200.

Tumanyan G. 2016, Cimmerians and Scythians in the Armenian Highland.– Journal of Armenian Studies (Yerevan), № 2, pp. 26–40.

Tumanyan G. S. 2017, Cimmerian and Scythian Funerary Rituals in the South Caucasus. – Near Eastern Archaeology (Chicago), vol. 80, iss. 3, pp. 196–201.

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И ПЕРСПЕКТИВЫ ИЗУЧЕНИЯ КИММЕРИЙСКОЙ КУЛЬТУРЫ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

Ключевые слова: новый подход, признаки, киммерийская культура, погребальный комплекс, группы погребений, погребальный обряд, группы племен, воины-всадники, оружие, конский убор.

Киммерийцы являются первым историческим народом Восточной Европы. Термин «киммерийская культура» известен в археологии с начала прошлого века. Разграничение киммерийских и скифских археологических комплексов – важнейшая проблема, которая до сих пор не нашла кардинального решения, в частности – в переднеазиатском регионе. Обсуждаемая проблема в армянской археологии вообще не изучалась. Археологическим изучением проявлений киммерийской культуры на Армянском нагорье можно создать основания для определения места киммерийской

культуры в ряду синхронных археологических культур упомянутого региона. Этим способом можно устранить противоречие, существующее между данными древних письменных источников и результатами археологических исследований. В системе памятников Армянского нагорья можно выделить ряд погребальных и жилых комплексов, которые, с определенной вероятностью, можно называть киммерийскими. Для достижения этой цели необходимо применение нового подхода. В ходе научного изучения нужно широко использовать данные о структурных элементах погребального комплекса, ритуале погребения и жертвоприношениях. При идентификации киммерийских погребальных комплексов, первичным, видимо, следует считать криволинейность стен погребальной камеры и присутствие каменных изваяний определенных (не антропоморфных) типов. Так как в киммерийских погребениях нередко покоились трупы воинов-всадников, поэтому для обсуждаемых погребений нужно выделить еще два признака – захоронение коня и размещение конского снаряжения в погребальной камере. Необходимо по возможности в целостности рассматривать набор вещей, который был присущ воинам-всадникам киммерийских племенных групп (оружие, конский убор, орудия труда и т. д.). В киммерийских погребальных и жилых комплексах Армянского нагорья нужно считать закономерным наличие как мужских, так и женских орудий труда.

Гарегин Туманян – д. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Армении Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археологические культуры эпох бронзы и железа Армянского нагорья, погребальный обряд, киммерийская археологическая культура. Автор 5 книг и 66 статей. gstumanyan@gmail.com

THE CURRENT STATE AND PERSPECTIVES OF INVESTIGATION OF CIMMERIAN CULTURE IN THE ARMENIAN HIGHLAND

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

Key words: new approach, attributes, Cimmerian culture, funerary complexes, burial groups, funerary ritual, tribal groups, warrior riders, weaponry, horse tack.

Cimmerians are the first historical people of Eastern Europe. The term “Cimmerian culture” is known in archaeology since the beginning of the last century. The problem of the differentation of Cimmerian and Scythian archaological complexes is very important, which has not yet found a cardinal solution, particularly – in the Western Asian region. The discussed problem was not explored in Armenian archaeology at all. Through archaeological investigation of

the manifestations of Cimmerian culture in the Armenian Highland, fundamentals can be established for defining the place of Cimmerian culture among concurrent archaeological cultures of the mentioned region. This can eliminate the existing contradiction between the information on this subject provided by ancient written sources and the findings of archaeological investigations. In the system of monuments of the Armenian Highland, a number of funerary and dwelling complexes can be identified that probably could be named Cimmerian. For achieving this aim, a new approach should be applied. During scientific explorations, available data on structural elements of a funeral complex, funerary rite, and sacrifices should be broadly considered. For identification of Cimmerian funerary complexes, primary consideration should be given to the curvilinearity of the burial chamber walls, and the presence of funerary stone sculptures of a specific type (not anthropomorphic) in the burial complex. As warrior riders' corpses were buried commonly in Cimmerian sepulchres, two more attributes should be considered for these sepulchres – the burial of horse and the placement of horse tack in the burial chamber. The whole set of items typical for militant horsemen of Cimmerian tribal groups (weapons, horse tacks, tools of work, etc.) should be considered as completely as possible. In Cimmerian funerary and dwelling complexes of Armenian Highland, the presence of both masculine and feminine tools of work should be considered as natural.

Garegin Tumanyan – Doctor of Sciences in History, Senior Researcher at the Department of Early Archaeology of Armenia of the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: Bronze and Iron Age cultures of the Armenian Highland, funerary rites, Cimmerian archaeological culture. Author of 5 books and 66 scientific articles. gstumanyan@gmail.com